

նէութիւնն : Նախ ամենակարեօր գրքի մը հրատարակութեան ձեռք կը զարնէ, որ թէ պէտ փոքր քանակաւ՝ բայց ազգին նոյն միջոցի գտնուած վիրքին համար անհրաժեշտ և մեծապէս հարկաւոր գրքոյի մը. այլուրեքնից ու ֆրիստոնէական վարդապետութեան. և որոց ձակասը գրուած է. « Հանդերձ Աստուծով : Գիրք այլուրեքնից յազապս նորեկ արգայոց՝ և մանկանց անկրթից. նաև արանց գետ եւս ոչ տեսչոց. որոց լիցի օժանդակ հասանելի ի կատարումն կրթութեան. և ի վարժումն ճակատէս ընթերցողութեան : Յօրինեալ ներտպարանում սրբոյ Էջմիածնի. և սրբոյն Սարգսի զօրավարի : Յամբողջրտամ քաղաքի : ի ներթուում փրկչին 1666 . իսկ Հայոց ՌճժԵ յունվարի Գ » : Զունի

յիշատակարան, միայն ի վերջ քրիստոնէական վարդապետութեանն, զոր հրատարակիչն կ'անուանէ « Յաղազս մանկանց առ ի կրթութիւն. և վարժումն ի կրօնս քրիստոնէութեան », հետեւեալ քանի մի տողերը կան. « Շարադրեցաւ բանս հաւատոյ սակս վարժութեան տնասից. ի թուի ֆրկչի 1666 . իսկ ի մերումն թուոյ ՌճժԵ ամենանն նոյեմբերի. որոյ էին աւուրք քսանեւհինգ : յԱմադերտամ քաղաքի, ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի » : Զտոնց ձեռք ընտիր, անվթար և անսխալ տպագրութիւնն. մէկէն կ'իմացուէր թէ հըմաւտ, կարող ա իր զործէն հասկըցող անձի մը կառավարութեան և տեսչութեան ներքոյ էր Ամադերտամի տպարանը :

Շարայարեւի

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԱՆՏՐԻ ԶԱՐԵԻԵՍՍ

(Տես յէջ 7)

### ԼԸ

Գարձ յերևան. — Վերլին անցը ընդ Երասխ. — Շահրիար գիւղը. — Արմասիք. — Խուլ-Ֆիլիսէ. — Մոստը կասօք յերևան :

16. Յուլիս. — Եւ անհ հրածեշտ տալով Երասխի ափանց՝ կը բռնենք Երևանու ճամբան, մեր ծրագիրը կէտ առ կէտ լննցընելով : Վերջին անգամ, գահութիւն Աստուծոյ, կ'անցնինք նշանաւոր գետը, ճիշդ այն տեղէն՝ ուր ութ օր յառաջ խղզուեցաւ Երևանցի վաժապետ մը՝ ուրիշ ութ ձիաւորաց հետ անցնելու առեն :

Այսուհետև պիտի երթանք ձախակողմեան փոստերէն, աշխկողմը թողլով Սուրմալու գիւղը, որուն գեղեցիկ ընկաղեքնիները դէմ կը դնեն յորութեան՝ շնորհիւ Երասխի առատ ջրոց, որով կ'ուզենք միշտ տեղացիք :

Պ. Շանսար սրոշեր էր որ քիչ մը յոգ-

նութիւն առնլու համար կենայիքնք այն իրիկուն ի Շահրիար : Առջինիս ձգուած է երկայն, հարթ, միօրինակ ճամբան ցիրուցան մարդերով մեծ զաշտապետնոյ մը վրայ : Այս կանաչ կէտերէն մին ալ է Շահրիար, բայց որչափ որ մենք յառաջ կ'երթանք, կարծես նա կը հեռանայ : Վից ժամ քայելէ վերջ՝ օթևանը կը հասնինք, և մեր վրանները կը պարզուին գեղեցիկ շէնքի մը բակին մէջ, որուն տէրերը բացակայ են :

Շահրիար գիւղը ընդարձակ պարտէզ մ'է ինամամլ ոռոգուած : Զետեղուած է 980 մետր բարձրութեան վրայ, և ունի գրեթէ երկու հարիւր հայ ընտանիքներ, որոնք անուանի

գեղնապոյն Հրէից տիպը 'իր ներկայացնեն, որ գարմանալի բան մը չէ, վասն զի ճիշդ այս կէտին վրայ հաստատուեցան ժամանակաւ գաղթական Հրեայք: Լի է գիւղը այգիներով, սրոց պատուքը կը տարուին սայլակներով յերևան 44 հզմ. անդին:

17 յուլիս. — Կանուխեկ, մեր թէյը առնելով, կ'ուզեորինք զէպ յերեւան: Կարաւանը առաջուց զրկելով երկու ձիաւորաց հետ, կը շարունակենք մեր միակերպ ճանապարհը ձիով դաշտին մէջէն, ծանր և կիզիչ մթնոլորտի տակ: Երկաթի շրջնակ մը կը սեղմէ զլուխս, մերձաւոր ծշան ջերման: Ո՛րքան փափաքելի էր ինձ թռչել անցնիլ վերստեքու երկայն շարքը՝ որ կը բաժնէ զիս յերևանէ: Բայց իմ Պեգասս այս հրաշքը ընելու կարողութիւնը չունի. դանդաղ քայլերով, ակամօք ի կայս, յոյնած առաջ կ'երթայ, այնպիսի զիմօք՝ որ կարծես կ'ըսէ. « Ի՞նչու ե՛րբ պիտի տեսն այս հաստատուն ծովերը »: Երկան ետևի կողմը պահած է առկաւին Արարտայ լաւաներուն յիշատակը: Իմաստուն կենդանիներ:

Ձիուս հետ այսպէս մտածելու ատենս, ուշադրութիւնս կը հրաւիրէ թոփատէփէի վրայ, հրադիւային կարմիր կաւ բլուր մը որ կը բարձրանայ դաշտին մէջ: Այս բլուրը՝ Ծահրիարի և Քուրուկուտանի միջև գետեղուած՝ լի է անհնդեզ աւերակներով, սքր են վերջին մնացորդք հուշակաւոր ամբողջին Արմաւիրի: Քալով քաղաքին՝ որ կը տարածուէր այս բլրան ստորտը՝ հետքի մը շուքն ալ մնացած չէ. հարցընելու է իրեն թէ արդեօք եղած է առան որ գոյութիւն ունեցած ըլլայ:

Արմաւիրի հիմնարկութիւնը եղած է Քրիստոսէ երկու հազար տարի յառաջ. և եղաւ, ըստ պատմագրաց, բնակութիւն Հայաստանի թագաւորաց տասնեւթ զարեր: Երբեմն կային շուրջը կողամախեսաց միասուններ, և հեթանոս քահանայք՝ Գորգոնի բլրմանց նման, խորհուրդ կը հարցընէին թեթև կամ ուժգին հովէ տարուբերած անբուց շարժման: Բայց այս պատգամատու կազմամաններէն մնացած չէ բնաւ, և Գարս-Սուր շուրջը՝ որ շատ հեռու չէ անկէ՝ կը տեսնուին միայն ուռնիներ:

Արեգական, Լուանի, Արաւեմայ և Ալբայունի պաշտամունքը կը յարգուէին երբեմն յԱրմաւիր, բայց ետքը փոխուեցան ի Բագարան (քաղաք կոտց) հետի յերուանդաշատէ 40 ասպարէզ, ըստ խորենացոյ, երբ Երուանդ սրբայն թողուց այս քաղաքը և փոխադրեց արքունիքը յափունս Էրասխայ և Ախուրեանի: Ուր ես հաստատութիւն չգտան, այլ իրենց բարբարոս անբանց փոփոխելու և քաղաքինդիր բնաւորութեան պատճառաւ՝ շատ մը պանդխտութիւններ ունեցան:

Բոլոր այս Վիպայուն անցեալէն՝ շեղակոյտ մը միայն կը յետնեմ փլածոյից կիկլոպեան պարսպայ: Բոլոր երկիրը քրքրուած է շուրջանակի, և պեղմանց հետքեր կ'ընծայէ:

Արեգական և Լուանի տաճարին վրայ փորիկ եկեղեցի մը կը բարձրանայ հիմայ, ուր կու գան Հայ ուխտաւորներ Երզնկադարձին:

Մենք անսուրբքս՝ համոյք մը կը զգանք՝ ջերմեանդ կեցողածքով՝ նստելու այս երբեմն Արեգական եռանդուն երկրպագուներէն կուխուած և համբուրուած քարերուն վրայ, և թեթև նախանշակ մ'ընել, Բայց ահա արեգակը բարկանալով իւր բազնին եղած նսխատանաց, կը շեշտէ մեր վրայ կիզիչ ճառագայթներ, և կը ստիպէ զմեզ խոնարհիլ իւր կայծակնաքայտ ցասման սոյն:

Կը շարունակենք ճամբանիս զէպ ի Գարս-Սու, որ կ'ոտոզէ այս մեծ գաշտը և կ'արգաստուրէ:

Առաջին գիւղը որ դիմացնիս կ'երևէ՝ Թաթարաց է, ճահճի մը մէջն գետեղուած, 20 ընտանեօք՝ արք աւազակութեամբ կ'ապրին: Բետոյ կու գայ Ելէրլիլի՝ Հնձոց վերջն ըլլալով ամբողջ գիւղը հանդիսի մէջ է: Երկիրը առմնուրեք ըստ մշակուած: Ուղին կ'անցնի բանպակի և ծխախոտի զեղեցիկ դաշտերէն:

Էկտ օրը կը հանդիսը շափարներու տուն մը՝ ճամբուն եղերքը բլրոյ մը վրայ: Ակնկալեալ ջերմը եկած գտած էր զիս, ուստի ձիէս իջնելով, պլլուած էի մուշտակի մը մէջ: Բլրոյն ստորուէն ձկ աստիճանի պայծառ աղբիւր մը կը բղխէ, որ հոսելու անդ չունենալով, ճահճի մը կազմէ, ուր կը դրօսունու ջրային գեղեցիկ իւշուանք:

Անձայր դաշտին մէջ կ'երևին աւերաւ

կաց կոչուեր, և Գարա—Սուի բերաւոր ճիւղերը, անտառ մը՝ յորում լին մը կայ, « Լին յոգատակաց » անուամբ: Ճամբուն օջ և ձախ կողմը լին են ուղտերու, ձիոց, ոչխարաց սփորտեօք, յիշատակք թողեալ ի կարուանաց, որ դիշեր ցերեկ կ'անցնին անկից: Պ. Շանտր կը գտնէ կրիայի գեղեցիկ պատեան մը:

Ժամը 6ի տտենները, Խա—Քիլիսէի սւ վախրը, կամ որ նոյն է Էջմիածին բուսածը, հոչակաւոր եկեղեցւոյն գանգակատունները, հայկական Հոռոի շրջապատը, կ'երևին աչացս, Աւետեաց երկրին նման. և որովհետե ասլ ևս անկարելի է ինձ ձիով յառաջ վարել ճամբաս յԵրևան, ամուսինս և Համբարձում կ'երթան կառք մի վարձելու:

Կարծես ամէն աղէկ կառքերը գնուած էին նոյն ատեն: Վարձուոր մը կը լծէ մեզ համար հին չգործածուելի սայլ մը, զոր սակայն մեծ սարսփութեամբ մը կ'ընդունիմ: Համբարձում մէկ ընկերով կ'երևն թղթատարի կառքը և կը մտրակեն:

Վրայ կու գայ անձրևը, որուն բարերար հոտանքը սիրով կը սողվենք: Սկիզբն է այս այն մեծ զարդարանքին՝ զոր պիտի ընենք, բաւական ատենէ թ վեր երեսի վրայ թողուած բլլալով, ջրին տակաութեան և բացօթեայ տեղւոյ մէկ ընելու դժուարութեանէն:

Մեր յԱրարատ արշաւանքը տեւեց 17 օր: Իրարու նայած ատեննիս փափաք մը կ'ունենանք ծիծաղելու. վասն զի սաստիկ նիւրաբացած ենք, նաև Երասխայ 40—50<sup>0</sup> տաք դաշտահովտին մէջ ստացած ենք՝ սաստիկ պղնձային ժանգ մը: Ի վերայ այսք ամենայնի՝ մեր պատկառելի լեռան վրայ

ըրած ուղեւորութիւնը և նորա կողերու վրայ գտնուած ֆրոյաց այցելութիւնը կը դմայլեցնէ զմեզ: Մեր շուն արդիւնաւոր եղաւ, և կը գտնանք լի աւարտ յիշատակաց և զիտական գիտողութեանց: Այլ անհասակի պմբեթը և միւսերէք Երեւանու, թաթարաց մեծ քաղաքին:

Հին կառքը կ'երթայ դէպ ի Կարմիր կամուրջը, ապամային երկաթներուն սարտափելի զրրգմամբն, և կը կենայ իսկոյն Գէորգեանց գեղեցիկ և ընդարձակ բնակարանին գիմաց, ուր մեզ շնորհալի ասպնջակահաութիւն մի կ'ըլլուի:

Բայց հոն պիտի չթողունք մեր բարի ուղեկիցը՝ Համբարձումը, որ այնչափ համառած է և կը փափաքի մեզ հետ մնալ մինչև մեր որոյ մեկնելու կէտը: Ասիկայ շատ կ'ուրախացընէ զմեզ. վասն զի խիստ լաւ ճանչցանք՝ այս տաճանելի ուղեւորութեան միջոց՝ մեր ընկերոջ զօրութիւնը, բարի կամքը և բարութիւնը: Եղաւ նա մեզ ամենէն լաւագոյն թարգմանը և անձնանուէր քան գումէն բարեկամս. որուն համար երջանիկ կը համարիմ զիս՝ դարձեալ յայտնելու հոս իրեն մեր շնորհակալութիւնը:

Օր մը միայն հարկաւոր էր պաշար պատաստելու, ձիերը փոխելու, քիչ մը քնանալու և բաղնիք մը երթալու համար: Մաս ատենէ ի վեր միտքս դրած էի արևելեան ոճով բաղնիք երթալ, այսինքն է շոգալով: Այս բաղնիքները յաճախ նկարագրուած են, ուստի աւելորդ է ինձ գրել, բայց պիտի չմոռնամ երբէք լուերու անաւոր բազմութիւնը՝ զոր հոն սողվեցինք: Ինչ կը ստակամ անոնց վերայ:

Շարայարելի

